

## Հայտարարություն

«Խնձորեսկի Գ. Սևունցի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ «Մաթեմատիկա» առարկայի ուսուցչի (9 դասաժամ ) թափուր տեղի համար:

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
  - բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
  - անձը հաստատող փաստաթուղթ,
  - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
  - ինքնակենսագրություն (Ձև 5),
  - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
  - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
  - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
  - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
- Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
- Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է, մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը, վերացնել և համալրել դրանք:
- Փաստաթղթերն ընդունվում են 2022թ. նոյեմբերի 23-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
- Մրցույթը տեղի կունենա 2022թ. դեկտեմբերի 9-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Խնձորեսկի Գ. Սևունցի ավան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Սյունիքի մարզ, Գորիս համայնք, գյուղ Խնձորեսկ 36փ. 18շ.:
- Տեղեկությունների համար զանգահարել (0284) 64-4-21 հեռախոսահամարով: